



ԱՌԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 443

Վիճակիս Հոգեւոր Հովհաններուն
Եւ Ծխական Խոր հուրդներու Ատենապետներուն

Գանատայի մէջ Առաջնորդի օղխանորդ Հոգշ. Տ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան
կը հաղորդէ մեզի թէ Արիս Եպս. Եկրվանեան առանց արտօնութեան Սուրբ Պա-
տարագ մատուցած է Թորոնթոյի օտար Եկեղեցիի մը մէջ, եւ թեմական իշխանու-
թենէն անկախ համայնք մը կազմած է եւ ծխական Խոր հուրդ նշանակած:

Ամենայն Հայոց Կեհափառ Հայրապետին հետ մեր հաղորդակցութեամբ կը
հաստատենք թէ Ամենայն Հայոց Կեհափառ Կաթողիկոսը կամ իր ներկայացուցի-
չը արածոնութիւն չէ տուած Արիս Եպիսկոպոսին, եւ մենք եւ Թեմական իշխա-
նութիւնը իրաւասութիւն չենք տուած Արիս Եպիսկոպոսին եւ կամ ոեւէ անձի
Թորոնթոյի մէջ, Սուրբ Խաչ Եկեղեցի անունով համայնք մը կազմելու եւ պաշ-
տամունքներ կատարելու:

Ուստի կը դատապարտենք Արիս Եպիսկոպոսի այս անկարգ ընթացքը եւ կ'ար-
գիլենք իրեն որեւէ կրօնական պաշտամունք կատարել մեր թեմին մէջ եւ կամ
մասնակցիլ համայնքային կեանքի գործունէութեանց:

Մեր թեմէն եեւէ մէկ հոգեւորական կամ սարկաւագ եւ կամ Եկեղեցական
կազմակերպութեան անդամ որ կը գործակցի Արիս Եպիսկոպոսին հետ կամ կը
քաջալերէ անկարգները՝ ենթակայ պիտի ըլլայ պատիժի:

Սիրոյ ողջունիւ

Տիր. Տիր. Տիր. Տիր.

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Մարտ 2, 1979
Նիւ Եորբ, ն. ն.